ՎԱԽՃԱՆՎԵՑ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ԱԲԲԱՀԱՅՐ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԸ

Հուլիսի 16-ին Բեյրութի Մխիթարյան վանքում վերջին հրաժեշտը տվեցին Մխիթարյան միաբանության նախկին աբբահայր, հայագետ եւ ձեռագրագետ Պողոս վրդ. Անանյանին /ծնվ. Կ. Պոլիս, 1922 թ./:

Պողոս վրդ. Անանյանի մահվան կապակցությամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը հետեւյալ ցավակցական հեռագիրը հղեց Մխթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Վարդան վրդ. Հեշիշյանին:

«Խոր ցավով գալիս ենք մեր վշտակցությունը բերելու Մխիթարյան միաբանության բոլոր անդամներին՝ Հ. Պողոս վրդ. Անանյանի անակնկալ մահվան առթիվ:

Մատների վրա հաշվվող Աստվածաբան վարդապետներից մեկը ևս այսօր բաժանվում է մեզանից՝ թողնելով իր ետին ծավալուն գիտական աշխատանքները՝ նվիրված Հայ Եկեղեցու պատմությանը և բազում հայրաբանական, եկեղեցագիտական հարցերի հետ առնչվող: Մեծ է իր մահվամբ բացված պակասությունը մեր հոգևոր կյանքում:

Իմաստալից մի կյանք ևս եկավ իր վերջակետին, որտեղից սկսվում է հոգևոր կյանքի բարիքները վայելելու ընթացքը և հավիտենական կյանքի լուսեղեն խորանների ապրելու մի նոր շրջան:

Թող բարին Աստված օրհնի նրա անթառամ հիշատակը և արժանացնի վայելման անթառամ պսակին երկնավոր, և թող Ս. Հոգին մխիթարի Մխիթարյան Միաբանության բոլոր անդամներին և Հ. Պողոս վարդապետի երկնատուր շնորհներով զարդարի հատկապես միաբանության նոր սերնդի անդամներին:

Մայր Տաճարում հատուկ հոգեհանգստյան պաշտոն ենք կատարելու Հ. Պողոս վրդ. Անանյանի բարի հիշատակին նվիրված և նրա հոգու խաղաղության համար, 20 հուլիս երկուշաբթի օր, մեռելոց հիշատակին նվիրված Վարդավառի տոնի հաջորդող օրը», - ասվում է հեռագրում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ